

## Ն.Վ.ԳՈԳՈՂԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Համաշխարհային գրականության մեջ յուրաքանչյուր գերաստղ-գրող հայտնություն է դառնում ոչ միայն իր ազգային մշակույթի ասպարեզում, այլև հավասարապես նպաստում է տարբեր ժողովուրդների գեղարվեստական խոսքի զարգացմանն ու հարստացմանը: Նման մեծություններից է ռուս գրականությունը հսկաներից մեկը՝ Ն.Վ.Գոգոլը: Ռուս գրականությունը բախտավոր սկիզբ ունեցավ 19-րդ դարի արշալույսին: Միանգամից, ասես նախախնամության հրամայականով, նրա երկնակամարում փայլատակեց այն եռաստեղությունը, որ ներառում է Պուշկին-Լերմոնտով-Գոգոլ հանձարների անունները: Եվ բախտավորությունն այն էր նաև, որ նրանց ներկայությամբ հառնեց անմահ քննադատ Վ.Գ.Բելինսկին:

Դեռևս 20-րդ դարի սկզբին, երբ Յուրի Ալեքսանդրովիչ Վեսելովսկին հարցումներ էր կազմակերպել՝ իմանալու հայ գրողների կարծիքը ռուս գրողների վերաբերյալ, մեծանուն Հովհաննես Թումանյանն ընդգծել է, որ հայ նոր գրականությունը ձևավորվել և հարստացել է ռուսական դասական գրականության բարերար ազդեցությամբ: Ծանոթանալով Ն.Վ.Գոգոլի և հայ գրականության առնչություններին՝ կրկնակի ես համոզվում անմահ Թումանյանի ճշմարիտ գնահատականին: Բազմազան են Ն.Վ.Գոգոլ-հայ գրականության կապի երանգները, միաժամանակ՝ շատ հարուստ: Խնդիրն այն է, որ Գոգոլի ստեղծագործությունը ճանաչում գտավ միանգամից և ինչ-որ չափով հիմք հանդիսացավ XIX դարի հայ գրականության ձևավորմանը, ապա իր գրական հունձքով նա դարձրեց դարձավ նաև իրականության մեջ, դրանց զուգընթաց մեծապես նպաստեց նաև հայ քննադատական մտքի առաջընթացին:

Այս գործընթացը հեռանկարային դարձավ նաև այն գործոնի շնորհիվ, որ Գոգոլին ուրախությամբ նկատեց և ամբողջ հասակով հառնեց այն հեղինակուհի ուսերի դեմ, ովքեր հարծապվել էին աստվածային շնորոքի տեր գրողի վրա՝ չնկատելով նրա հայտնություն լինելը: Բելինսկին առանձնապես իր "Հիշիկովի արկածները" ծավալուն հոդվածում, ի հեճուկս վայ քննադատների, ընդգծեց "....Գոգոլը մեծագույն տաղանդ է, հանճարեղ պոետ և ժամանակակից Ռուսաստանի առաջին գրողը":<sup>1</sup>

<sup>1</sup> Белинский В.Г. Собр. соч. в трех томах. М., 1955, т. 2, стр. 285

Բելիսկին հանձին Գոգոլի ոչ միայն տեսավ իր ժամանակի հանճարեղ գրողին, այլև նրա անվան հետ կապեց ռուս գրականության գալիքը:

Ն.Վ.Գոգոլի անսովոր տաղանդը շատ շուտով նկատեցին նաև հեղափոխական դեմոկրատներ Չերնիշևսկին, Դոբրոլյուբովը և այլք, որոնք Գոգոլի ստեղծագործությունը բարձր գնահատեցին ինքնատիպության, ժողովրդի ինքնագիտակցության, նրա ազատաբաղձ ոգու արթնացման, հայրենասիրական գաղափարի, ապագայի հանդեպ ունեցած պայծառ հավատի շնորհիվ: Ժողովրդական ոգու հավերժական արտահայտություն համարվեցին գոգոլյան “Ռևիզորը”, “Տարաս Բուլբա”, “Մեռած հոգիներ” և այլ երկերը: Գոգոլի ռեալիզմը որակվեց որպես գոգոլյան ուղղություն ռուս գրականության մեջ: Այն հաստատվեց ոչ միայն ռուս, այլև տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հայ գրականության մեջ: Ն.Վ.Գոգոլի բարձրարվեստ ստեղծագործությունը հայ ընթերցողին հասավ երկու ճանապարհով: Նախ՝ ռուսերեն լեզվով, ապա՝ թարգմանաբար: Հայտնի է, որ Ռուսաստանի բուհերում կրթություն էին ստանում ոչ քիչ հայ ուսանողներ, Սոսկվայում գործում էր Լազարյան ճեմարանը, առանձին հայ մտավորականներ արդեն Ռուսաստանի քաղաքացիներ էին... Պարզ է, որ նրանք Գոգոլի երկերը ընթերցում էին գրողի մայրենի լեզվով: Այդ են հաստատում մեծանուն ժողանկարիչ Հովհաննես Այվազովսկու, տաղանդավոր իմպրովիզատոր, մոսկվայաբնակ Աուրեն Հարությունովի, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի, նշանավոր բանասեր Գևորգ Ախվերդյանի, հայ ռեալիստական դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանի, “Հյուսիսափայլ” հանդեսի խմբագիր, նշանավոր հրապարակախոս Ստեփանոս Նազարյանցի, ռուս հեղափոխական դեմոկրատների զինակից Միքայել Նալբանդյանի և ուրիշ անվանի մտավորականների վկայություններն ու ամնոռաց հուշերը, գրախոսություններն ու մեծարման հեռագրերը: Նրանց բոլորին գրավել ու համակել են Գոգոլի երկերի քննադատական ոգին, ժողովրդական կենցաղի ու սովորությունների ռեալիստական պատկերումը, հայրենիքի ու ժողովրդի հանդեպ ունեցած ամենացորդ սերը, այն ամենը, ինչ համահունչ էր հայ առաջադեմ մտավորականների տենչերին ու ակնկալիքներին: Ուշագրավ է այն փաստը, որ 1842 թվականի սեպտեմբերի 9-ին Պետերբուրգի Ալեքսանդրյան թատրոնում բեմադրվում է Ն.Վ.Գոգոլի “Մեռած հոգիներ” երկից առանձին պատկերներ, որին ներկա են լինում Վ.Գ.Բելիսկին, ինչպես նաև Գևորգ Ախվերդյանը: Հայ բանասերը անվանի հայագետ Մկրտիչ Էմինին հղած նամակում ամնիջապես բաժանել է իր գրական կարծիքն ու նրա տրադիցիաների յուրացման անհրաժեշտությունը:

Ն.Վ. Գոգոլի ստեղծագործությունը գտնվել է “Յյուսիսափայլ”-ի աշխատակիցների և հեղինակային կոլեկտիվի ուշադրության կենտրոնում: 1859 թվականի հունվարյան համարում Ստեփանոս Նազարյանը, անդրադառնալով Գոգոլի “Ռևիզոր”-ի կերպարներին, նրանց ներկայացնող ուժին, ընդգծել է անվանի գրողի կարծիքը թատրոնի մասին և ակնկալել հայկական թատրոնի կարևորությունը: Նա գրել է. “Սի հայկական թատրոնաբեմ շատ ու շատ հարկավոր է մեզ՝ հայերիս, որպես ազգու, ներգործող խրատ, որպես պատիժ և քաջալերություն, որպես հայելի պատկեր մեր հայկական կյանքին, որպես մի մեծ դաստիարակիչ դպրոց մեծ ու փոքրերի, կնամարդի ու տղամարդի համար”:<sup>2</sup> Իսկ Միքայել Նալբանդյանը հայ գրողներին ուղղակի կոչ էր անում հետևել գոգոլյան ռեալիզմին՝ քննադատական ռեալիզմը արմատավորելու համար: Այս առումով նա մատնացույց է արել 1860-ականներին հայտնի գրող Գաբրիել Տեր-Յովհաննիսյանի “Տեր-Սարգիս” վեպը՝ գրված գոգոլյան ռեալիզմի ուժով: Նալբանդյանը նշել է. “Եթե երբևէ լինի այդ կիսատ մնացած գործը ավարտվի, միևնույն ոգով և հմտությամբ շարունակվելով, այն ժամանակ մեր նոր դպրության մեջ այդ գործն այն տեղը կունենա, ինչ տեղ ռուս դպրության մեջ ստացել է “Սեռած անձիքը”: Թող կանխիկ ընդունի մեր սրտանց շնորհակալությունը հայկական Գոգոլը, որին մաղթում ենք մի փայլուն գալոցը”:<sup>3</sup>

Ռուս գրականության մեջ Գոգոլի դերի մասին Սմբատ Շահազիզը նշել է “Գոգոլը պսպղուն և ռելիեֆ ներկերով երևան հանեց ռուսաց նիսդուկացի մանրանկարը, պոմպեյիների ընտանեկան կյանքը, չինովնիկների բյուրոկրատական ծնապաշտությունը և առհասարակ երկրի մուսիական անշարժությունը, այնպես որ օրհասականները դուրս արծան մահապետական որջերից և սկսվեց մի սարսափելի իրարանցում և պատերազմ, որ շարունակվում է մինչև այսօր”:<sup>4</sup>

Հայ դրամատուրգիայի դասական Գաբրիել Սունդուկյանը մեկ անգամ չէ անդրադարձել Գոգոլի երկերին: 1846-1850 թվականներին Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի արևելյան բաժնում սովորելիս նա խորապես ուսումնասիրում է Գոգոլի ստեղծագործությունը, հաճախում թատրոն, ընթերցանում ռուսական դրամատուրգիայի հմայքը: Հայ գրականագիտությունն ու թատերագիտությունը բացահայտել ու բարձր են գնահատել ստեղծագործական այն առնչությունները, որ եղել են Գոգոլի և Սունդուկյանի գրական նվաճումներում: Սունդուկյանն ինքն է խոստովանել իր հեռագրում հղված Ռուս գրականության սիրողների ընկերությանը 1909 թ.

<sup>2</sup> Յյուսիսափայլ. 1859, II 1

<sup>3</sup> Նալբանդյան Մ. ԵԼԺ, Եր., 1940, հ.3, էջ 120

<sup>4</sup> Շահազիզյան Ս. Ամռային նամակներ. Մ., 1897, էջ 175-176

Մոսկվայում Գոգոլի արծանի բացման առթիվ: 83-ամյա Սունդուկյանը մեծարում է "Ռևիզորի" հեղինակին և կարոտով հիշում պետերբուրգյան այն օրերը, երբ ինքը դիտում էր հանգուցյալ Շչեպկինի խաղը գորոդնիչու դերում: Նա Գոգոլի անվան հետ է կապում դեպի թատրոնն ունեցած իր հետաքրքրությունն ու սերը: Դրանով էլ հենց բացատրվում է Գոգոլի և Սունդուկյանի ստեղծագործություններում ընդգծված սոցիալական մոտիվը: Ն.Վ.Գոգոլի բարձրարվեստ ստեղծագործությունների հայերեն լեզվով թարգմանելու գործը տեղի ունեցավ համեմատաբար ուշ, որովհետև դա կապված էր դժվարությունների հետ, պարզապես հեշտ չէր թարգմանել համաարեղ այդ արվեստագետին: Ամեն դեպքում հայ ընթերցողները պետք է մաշտոցյան-մայրենի լեզվով կարդային Գոգոլին: Եվ տեղի ունեցավ հրաշքը, որ կապվա՜չ է մեծ ռեալիստ Ալեքսանդր Շիրվանզադեի հետ: Նրա թարգմանությամբ 1886 թ. Թիֆլիսի հայկական թատրոնում բեմադրվեց Գոգոլի "Խելագարի օրագիրը" պիեսը, որտեղ հոգեբանական էությունի դերակատարումով հանդես է եկել հռչակավոր արտիստ Պետրոս Ադամյանը: Գոգոլի "Ռևիզորը" "Վերաքննիչ" խորագրով թարգմանել է Տեր-Աստվածատրյանը, որի բեմականացումը կայացվել է դարձյալ Թիֆլիսի հայկական թատրոնում:

Գոգոլի արծակ երկերի թարգմանությունը ևս սկսվում է 19-րդ դարի 80-ական թվականներից, որին մասնակցում են թարգմանիչ Զովհաննես Նազարյանը, Ալ.Շիրվանզադեն, Մանուկ Աբեղյանը: Ի դեպ, Մանուկ Աբեղյանն է, որ 1892 թ. հաջողությամբ թարգմանել է "Տարաս Բուլբա": Գոգոլի երկերի թարգմանությամբ մասնակցում են նաև Պերճ Պռոշյանը, Զակար Գյուրջյանը և այլք: Զայ դասականները Գոգոլի ամբողջ ստեղծագործությունը համարում էին հզոր մի սկիզբ 19-րդ դարի ռուսական արծակում: Նրանք հայտարարեցին, որ Գոգոլն իր "Շինել" գրվածքով հիմք դրեց ռեալիզմին դեռ Բալզակից առաջ: Մինչև 1920 թվականը Ն.Վ.Գոգոլի "Ռևիզորը" թարգմանվել է հինգ անգամ, "Ամուսնությունը"՝ երեք անգամ, "Տարաս Բուլբա"՝ երկու անգամ: Զայ ընթերցողների լայն շրջանակներին են հասցվել նաև անմահ գրողի պատմվածքները:

1902 թ. նշվեց Ն.Վ.Գոգոլի մահվան 50-ամյակը: Այդ առիթով ուշագրավ հոդվածներ երևացին հայկական տարբեր լրագրերում: "Մուրճ" ամսագիրը իր 2-րդ համարում գետեղեց Ստեփան Լիսիցյանի ծավալուն հոդվածը "Ն.Վ.Գոգոլ" վերտառությամբ: Զայ մշակույթի հռչակավոր ներկայացուցիչը հպարտությամբ նշում է. "Քանի ավելի ենք հեռանում XIX դարի ռուսաց գրականության աղբյուրներից, այնքան ավելի է մեծանում մեր աչքում Գոգոլի գեղարվեստական գործունեության նշանակությունը... Գոգոլը կարողացել է իր ստեղծագործությունները բարձրագույն կատարելությանը հասցնել գրեթե բացառապես իր

բնատուր ծիրքերի շնորհիվ, գրեթե առանց որևէ օտարազգի ազդեցության... Գոգոլի կարծիքով, բանաստեղծությունը, լինի նա մարդու և հասարակության դրական թե բացասական կողմերը արտահայտող, նախ և առաջ պիտի հավատարիմ մնա ճշմարտությանը... Գոգոլի համար ծիծաղը նույնպիսի մի ուժ է, ինչպիսին է հիացմունքը: Նրանից առաջ ոչ ոք ռուսաց գրականության մեջ նրա պես բարձր չէր դասած ծիծաղի նշանակությունը”:<sup>5</sup>

Ստեփան Լիսիցյանը, անդրադառնալով Գոգոլի՝ արտասահման մեկնելուց հետո թույլ տված գաղափարական նահանջներին, շեշտում է “Բայց, այնուամենայնիվ, նրա նախկին տեսական հայացքները և առավել ևս նրա գեղարվեստական երկերը դեռ չէին կորցնում իրանց ահագին նշանակությունը նոր հանդես եկած գրական գործիչների համար: Տուրգենևի, Դոստոևսկու, Գրիգորովիչի, Օստրովսկու, Նեկրասովի, Տոլստոյի առաջին հեղինակությունների մեջ կարելի է ցույց տալ անհամար հետքեր Գոգոլի գաղափարների և ուղղության ազդեցության”:<sup>6</sup> Ուշագրավ երևույթ է այն փաստը, որ “Մշակ”-ը Գոգոլի մահվան 50-ամյակը գնահատում է որպես գրական տոն: 1902թ. թիվ 69-ում տպագրված հոդվածում կրկին նշվում է Գոգոլի ստեղծագործության հզոր ուժն ու տեղը համաշխարհային գրականության մեջ:

1909 թվականին լայնորեն նշվեց Ն.Վ.Գոգոլի ծննդյան 100-ամյակը: Այդ առիթով աշխուժացավ հայ մամուլը. կրկին արժանի իր խոսքն ասաց հայոց քննադատական միտքը: Հանդեսներում և տարբեր թերթերում գրախոսություններով հանդես եկան Արշակ Չոպանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Լևոն Մանվելյանը, Վլեքսանդր Ծատուրյանը, Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը և ուրիշներ: “Մշակը” 1909 թվականի մարտ և ապրիլ ամիսներին ուշիուշով հետևել և լուսաբանել է Ն.Վ.Գոգոլի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումները: Նույն տարվա 66, 67, 69 և 162-րդ համարներում հանդես է եկել թերթի մոսկովյան թղթակիցը՝ Գերասիմ Բաղդասարյանը՝ մոսկով-Չոն ստորագրությամբ: Նա նախ հանգամանորեն նկարագրում է մարտի 20-ին Մոսկվայում տեղի ունեցած արարողությունները և համաժողովրդական այն սերը, որ ցուցաբերել են քաղաքի ընկերություններն ու կազմակերպությունները, ստեղծագործական միություններն ու կրթօջախները և ապա նշում Գոգոլի անվան գրադարան-ընթերցարանի բացումը, որպես երևույթ: Թերթի թղթակիցը ընդգծում է նաև Լազարյան ճեմարանի ակտիվ մասնակցությունը գոգոլյան տոնին՝ որպես հարգանքի տուրք մեծ գրողի հիշատակին: Դիմելով

<sup>5</sup> Մուրճ, 1902, N 2, էջ 179

<sup>6</sup> Մուրճ, 1902, N 2, էջ 186

ընթերցողին՝ թղթակիցը գրում է. “Գոգոլը այն գործիչներից է, որի մասին հատորներ կարելի է գրել, բայց “Մշակի” սուղ էջերը թույլ չեն տա ինձ ավելի մանրամասն և ավելի երկար կանգ առնել Գոգոլի նման մի խոշոր տաղանդի վրա, այն Գոգոլի վրա, որ իր ստեղծագործություններով մի մեծ գրական դպրոց է ստեղծել ռուսաց հսկայական գրականության մեջ”:<sup>7</sup>

“Մշակի” 1909 թվականի 162-րդ համարում տպագրված է Ռսկու-Չոնի հաղորդումը՝ նվիրված Ն.Վ.Գոգոլի մահաբժանի բացմանը, որ տեղի է ունեցել ապրիլի 26-ին, Մոսկվայում՝ Արբատի հրապարակի վրա: Ներկայացնելով հուշարձանի հանդիսավոր բացումը՝ թղթակիցը նշում է Գոգոլի թողած աղբատիկ նյութական ունեցվածքը և ավելացնում. “Ուրեմն սխալ է մեր մեջ արմատացած այն կարծիքը, որ իբր թե ռուս հեղինակները մշտական ապրում են լավ, հարուստ, իսկ մահից հետո թողնում են ահագին հարստություն”: Սակայն հայ լրագրողը բարձր է գնահատում Գոգոլի թողած գրական ժառանգությունը: “Գոգոլի թողած նյութական ժառանգությունը, ճիշտ է, շատ աղքատ և աննշան է, բայց չպետք է մոռանալ, որ նրա թողած մի ուրիշ ժառանգությունը՝ նրա բեղմնավոր կյանքն ու գործունեությունը, միշտ էլ կապրեն ազգերի գրականության պատմության մեջ”:<sup>8</sup>

Ն.Վ.Գոգոլի երկերի թարգմանության գործը նոր թափ ստացավ խորհրդային տարիներին: 1934թ. մեծ գրողի «Տարաս Բուլբա»-ն նոր որակով հնչեցրեց Ակսել Բակունցը: Այնուհետև Դերենիկ Դեմիրճյանը լուծեց «Մեռած հոգիների» բարձրարվեստ թարգմանության հարցը: Գոգոլի երկերի վեցհատորյակը լավագույն մի պարզ և եր հայ մշակույթին: Զայ ընթերցողը որակյալ թարգմանությամբ ստացավ հանճարեղ գրողի «Երեկոներ Դիկանկային մերձակա խոտորում», «Հնաշխարհիկ կալվածատերեր», «Տարաս Բուլբա», «Վեպ այն մասին, թե ինչպես գժտվեցին Իվան Իվանովիչն ու Իվան Նիկիֆորովիչը», «Քիթը», «Դիմանկարը», «Շինելը», «Խելագարի հիշատակարանը», «Ռևիզոր», «Ամուսնություն» երկերը:

Բացի նրա գեղարվեստական երկերից թարգմանվեցին նաև Գոգոլի ընտիր նամակները ուղղված ռուսական մշակույթի անվանի ներկայացուցիչներին: Ամսաի գրողի ստեղծագործություններին զուգահեռ թարգմանվել են նաև գոգոլագիտության ընտիր էջերը, որ ներկայացնում են գոգոլյան ժամանակաշրջանի գրական խմորումներն ու հասարակական-սոցիալական իրավիճակը:

<sup>7</sup> Մշակ, 1909, N 69

<sup>8</sup> Մշակ, 1909, N 162

Այս օրերին համաշխարհային գրական հասարակայնությունը նշում է Ն.Վ.Գոգոլի ծննդյան 200-ամյակը, որին անդրադառնում է նաև հայ մտավորականությունը Հայաստանի բուհերում, դպրոցներում և այլուր:

Դեռևս 1836թ. Վ.Ժուկովսկուն ուղղված իր մի նամակում Ն.Վ.Գոգոլը մարգարեորեն գրել է. «Գիտեմ, որ ինձանից հետո իմ անունն ավելի բախտավոր է լինելու ինձանից»:<sup>9</sup> Այո, բախտավոր անուն է վաստակել Ն.Վ.Գոգոլը ոչ միայն Ռուսաստանի, այլև աշխարհի շատ ժողովուրդների, այդ թվում նաև մեր ժողովրդի մշակույթի մեջ: Եվ այն հանգամանքը, որ այսօր հայ ընթերցողը Գոգոլի ամբողջ ստեղծագործությունը կարող է ըմբռնել իր մայրենի լեզվով, կրկին ու կրկին հաստատում է ռուս հանճարեղ գրողը շարունակում է իր առաքելությունը:

---

<sup>9</sup> Гоголь Н.В. Собр. соч. в шести томах. т.6, М., 1953, стр.306